«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայ-Ռուսական համալսարանի գիտության գծով պրոռեկտոր,
փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր Պ.Ս.Ավետիսյան

«4» փետրվարի 2025թ.

ԿԱՐԾԻՔ

Հայ-Ռուսական համալսարանի

(առաջատար կազմակերպության)

Մելիք Արտաշեսի Մելիքյանի

«Հանցագործության պրովոկացիան քրեական իրավունքում» թեմայով

ԺԲ.00.05 - Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք մասնագիտությամբ,

իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 327 որոշման 24-րդ կետի համաձայն առաջատար կազմակերպության է ներկայացվել ՀՀ ԲԿԳԿ-ի ԵՊՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդում 19.02.2025-ին պաշտպանության նշանակված (ԺԲ.00.05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ), Մելիք Արտաշեսի Մելիքյանի *«Հանցագործության պրովոկացիան քրեական իրավունքում»* թեմայով գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսությունը՝ այն գնահատելու, արդյունքների նշանակությունը գիտության ոլորտում նշելու և համապատասխան դիտարկումներ իրականացնելու համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի՝ 2025 թվականի փետրվարի 4-ի նիստում, որին մասնակցել են քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ՝ ի.գ.թ., դոցենտ Նաիրա Զոհրաբյանը, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան Սերժիկ Ավետիսյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Ստեփան Ծաղիկյանը, ի.գ.թ. Արմեն Ղուկասյանը, ի.գ.թ. Անդրանիկ Ռաշիդյանը, ի.գ.թ. Ադելինա Սարգսյանը:

Գիտական հետազոտության արդիականության, բովանդակության և գիտական նորույթի մասին:

Քրեական իրավունքում հանցագործության պրովոկացիայի զբաղեցրած տեղի, դրա էության վերաբերյալ ներկայացված աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ինչպես արտաահմանյան, այնպես էլ ներպետական փորձի շրջանակներում առկա իրավական զարգացումներով:

Մասնավորապես, ներպետական օրենսդրությամբ, եթե նախորդ քրեական օրենսգրքերով նախատեսված էին միայն հանցագործության պրովոկացիայի տարբեր ոլորտներ ներառնակող մասնավոր դրսևորումները՝ Հատուկ մասում, ապա ՀՀ գործող քրեական օրենսգրքում՝ կատարվել են զգալի փոփոխություններ՝ համապատասխան կարգավորումներ նախատեսվելով նաև Ընդհանուր մասում:

Միաժամանակ, չնայած ներպետական իրավունքում հանցագործության պրովոկացիայի համեմատաբար սակավաթիվ դրույթների առկայության, արտասահմանյան մի շարք երկրներում՝ կոդիֆիկացված նորմերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված պրակտիկայում, տեսաբանների կողմից արտահայտված դոկտրինների համակցմամբ հետազոտման օբյեկտի վերաբերյալ առկա է իրավական հարուստ պաշար: Մինչդեռ, այդ պայմաններում, ևս, քննարկվող երևույթի շուրջ մոտեցումները հաճախ միասնական չեն և հաճախ անգամ իրարամերժ են:

Այս իմաստով, հանցագործության պրովոկացիայի շուրջ խորքային

հետազոտությունը, առանձին հիմնախնդիրների վերհանումը և դրանց շուրջ համապատասխան եզրահանգումներ և առաջարկներ ներկայացնելու անհրաժեշտությունն ու հետաքրքրությունը, հետևապես՝ գիտական աշխատության արդիականությունն ակներև է:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ համապարփակ վերլուծության է ենթարկվել հանցագործության պրովոկացիայի ինստիտուտը: Համալիր ուսումնասիրության արդյունքում կատարվել են ոչ միայն հայեցակետային բնույթի տեսական եզրահանգումներ, այլ նաև ներկայացվել են ՀՀ գործող քրեական օրենսգրքի կատարելագործմանն ուղղված մի շարք գործնական առաջարկություններ, սահմանվել են նոր տերմիններ և հասկացություններ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, 6 պարագրաֆներից, եզրակացությունից և իրենից ներկայացնում է քրեական իրավունքի համար էական նշանակություն ունեցող, ընդգրկուն, արդիական, համապարփակ և տրամաբանական կառուցվածք ունեցող գիտական աշխատություն, որը բազմակողմանի իրավական վերլուծություն է՝ քրեական իրավունքում հանցագործության պրովոկացիայի մասին իրենից ներկայացնելով նաև գիտական նորույթ:

Աշխատանքում հեղինակի կողմից օգտագործվել են հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականություն, ներպետական և միջազգային իրավական ակտեր և դատական նախադեպեր, դատական պրակտիկայի նյութեր և տարբեր դոկտրինալ մեկնաբանություններ:

Ատենախոսության բովանդակությունը պայմանավորում են հետազոտության ներածության մեջ նշված նպատակը, տեսական և գործնական խնդիրները, որոնք տեսականորեն ճիշտ են առաջադրված, ինչպես նաև հիմնավորված և փաստարկված պաշտպանությանը ներկայացված դրույթները: Այդ մասին են վկայում նաև ատենախոսության գլուխներում շարադրված և ուսումնասիրության առարկա դարձած գիտակիրառական նշանակության գաղափարները:

Ատենախոսությունն ունի տրամաբանված և հետաքրքիր շարադրանք:

Ատենախոսության 1-ին գլուխն առնչվում է հանցագործության պրովոկացիայի

տեսական հիմունքներին:

Նախ՝ §1.1.-ում ներկայացվում է պրովոկացիայի՝ իբրև սոցիալական երևույթի դրսևորումները տարբեր ասպարեզներում՝ համապատասխան առանձնահատկություններով, ինչի արդյունքում տրվում է դրա էությունն արտահայտող հասկացությունը՝ առանձին՝ տարբերակիչ գծերով:

Այնուհետև անցում է կատարվում քրեական իրավունքի դաշտում արդեն «Հանցագործության պրովոկացիա» երևույթի բնորոշմանը և էության բացահայտմանը և §1 .2-ում անդրադարձ է կատարվում դրա պատմական զարգացմանը, առանձին աղբյուրներում հանդիպող ակնարկներին՝ ցույց տրվելով հետազոտման առարկայի քրեաիրավական բնութագիրը:

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է հանցագործության պրովոկացիայի իրավական կարգավորմանը:

§2.1-ում ներկայացվում է հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ կարգավորումները արտասահմանյան և ներպետական քրեական իրավունքում, որտեղ մանրամասն ուսումնասիրվում և դասակարգվում են հետազոտության առարկայի վերաբերյալ դրույթները: Ուսումնասիրության լույսի ներքո վերլուծվել է նաև ներպետական փորձը, որը համկցվել է հայերենական իրավունքում առկա առանձնահատկությունների հետ և նախանշվել են այդ մասով իրավունքի զարգացման արդի միտումները:

Երրորդ գլուխը հատկացված է հանցագործության պրովոկացիայի հիմնախնդիրներին՝ քրեական իրավունքի ընդհանուր և հատուկ մասերում:

§3.1.-ում հետազոտության օբյեկտը հարաբերակցվել է մի շարք քրեաիրավական կառուցակարգերի, մասնավորապես՝ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների, քրեական պատասխանատվությունից ազատող հիմքերի, պատժի, հանցակցության ինստիտուտների հետ: Այդ շրջանակներում քննարկվել են տարբեր խնդրահարույց հարցեր և ներկայացվել համապատասխան եզրահանգումներ և առաջարկներ:

Առանձին հանցատեսակներում հանցագործության պրովոկացիայի դրսևորումների, դրանցում առկա որոշ բացերի, և վերջապես, հանցագործության պրովոկացիայի համար

քրեական պատասխանատվություն նախատեսող նորմ սահմանելու վերաբերյալ դիրքորոշումներն ամփոփվել են §3.2.-ում:

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտված է պաշտպանությանը ներկայացված դրույթներում: Բացի այդ, եզրակացությունը պարունակում է ատենախոսությանը վերաբերող հիմնական, ինչպես նաև գիտության զարգացման համար հետաքրքիր գաղափարներ և եզրահանգումներ:

Անհերքելի է, որ աշխատությունն ունի իր ուրույն տեղը տվյալ ոլորտում եղած գիտական աշխատություններում և քրեական իրավունքի գիտության բնագավառում:

Ատենախոսության գիտական արդյունքների մասին:

Ատենախոսի կողմից հրատարակվել է թեմային վերաբերող՝ թվով ինը գիտական հոդված, որոնք արտահայտում են թեկնածուական ատենախոսության մեջ շարադրված դրույթները:

Ատենախոսության սեղմագիրը, հակիրճ արտահայտում է հիմնական գիտական աշխատության բովանդակությունը, և համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Կատարված հետազոտության միջոցով ձևավորված արդյունքի և արտահայտված դիրքորոշումների գիտականությունը միանշանակ դրական գնահատականի են արժանի, իսկ ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթները՝ գիտականորեն հիմնավորված:

Հետազոտության գիտական և գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատությամբ որոշակիորեն կանխորոշվել են ներպետական քրեական իրավունքում հանցագործության պրովոկացիայի զարգացման արդի միտումները, տարբեր երկրների և առանձին տեսաբանների կողմից որդեգրված իրարամերժ մոտեցումների շուրջ առաջ են քաշվել հստակեցնող թեզեր, ամփոփվել բարձր դատարանների ձևավորված պրակտիկան:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Ատենախոսության 77-78-րդ էջում հեղինակը ներկայացրել է պրովոկացիայի հիմքով քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք նախատեսելու անհրաժեշտության բացակայության մասին իր հիմնավորումները՝ պրովոկատարի և պրովոկացիայի ենթարկված անձի տեսանկյուններից: Ուսումնասիրվել են, ինչպես քրեական օրենսդրությունը, այնպես էլ այլ օրենքներն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան:

Արդյունքում, հեղինակը փաստել է, որ պրովոկացիայի հիմքով քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է, ինչը նշվել է նաև ատենախոսության եզրակացության 7-րդ կետում (էջ 127):

Առաջ քաշված գիտական հետևությունը պայմանավորվել է նրանով, որ Եվրոպական դատարանի կողմից սահմանված առանձնացված ստանդարտների պայմաններում հստակ գծված է սահմանը՝ օրինաչափ վարքագծի և պրովոկացիայի միջև, երբ հիշյալ սահմանը հատվում է պայմանավորված հաստատապես հայտնի նախատեսվող հանցագործության իրականացումը խափանելու համար, և եթե հետապնդվող նպատակին չէր կարելի հասնել առանց ռիսկի դիմելու, և ռիսկի դիմած անձն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը կանխելու համար, այդ դեպքում գործադրելի կլինի հիմնավորված ռիսկի հիմքով քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքը: Իրավունքի այլ ճյուղերով կարգավորվող հարաբերություններում պրովոկացիոն այն արարքների պարագայում, որոնք արտաքին հատկանիշներով նմանվում են հանցագործության պրովոկացիայի իրականացմանը, հեղինակը եզրահանգել է, որ դրանցով նախատեսված են պատասխանատվության այլ տեսակներ, որոնք ընդհանրապես քրեական իրավունքի տիրույթից դուրս են գտնվում: Միաժամանակ, հեղինակը գտել է, որ պրովոկացիայի ենթարկված անձի կողմից հանցագործություն կատարելիս՝ համապատասխան իրավիճակներում կիրառելի կլինեն ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածները և այդ պարագայում ևս պրովոկացիայի համար քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանք նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է:

Բարձր գնահատելով հեղինակի կողմից արտահայտված տեսակետերը,

միաժամանակ աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից բարձրացվեր հարց այն մասին, թե Եվրոպական դատարանի կողմից սահմանված՝ պրովոկացիայի արգելքի պայմաններում, քրեական հետապնդման հարուցման անօրինականության և ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության պայմաններում, պրովոկացիայի ենթարկված անձի համար ի՞նչ իրավական երաշխիքներ պետք է գործեն:

2. Պաշտպանությանը ներկայացվող երկրորդ դրույթում հեղինակը իրավացիորեն առաջարկել է ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել 83[1]-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պրովոկացիայի արդյունքում առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նրա արարքի հետևանքով էական վնաս չի հասցվել քրեական օրենքով պաշտպանվող օբյեկտին, կամ վերջինս հատուցել է վնասը կամ այլ կերպ շտկել հանցագործությամբ պատճառված վնասը»:

Միաժամանակ, հեղինակն առաջարկել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքները լրացնել 13-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ *«Հանցանքը պրովոկացիայի ազդեցությամբ կատարելը»*:

Մասնավորապես, իր այդ առաջարկի հիմնավորումների համար հեղինակը ելակետ է ընդունել այն իրողությունը, որ հանցագործության պրովոկացիայի ներգործությունը ցանկացած դեպքում հանցագործություն կատարելու վճռականություն առաջացնելու էական պայման է և պրովոկացիայի հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու իրավական հնարավորության ընձեռումը ելնում է այդ ինստիտուտի ընդհանուր բովանդակությունից (81-82-րդ էջեր) :

Հեղինակն այդ համատեքստում, ի թիվս այլ պատճառաբանությունների նշել է նաև, որ այդ հիմքի կիրառումը հնարավոր կլինի պրովոկացիայի ազդեցությամբ էական վնաս չհասցնելու պարագայում:

Համամիտ լինելով հեղինակի առաջարկությունների հետ, գտնում ենք, որ ճիշտ և նպատակահարմար կլիներ առաջարկվող հոդվածում առկա պայմանների առկայության

դեպքում դրա կիրառումը իրավապահ մարմինների և դատարանների համար նախատեսել որպես պարտադիր, այլ ոչ թե հայեցողական:

Նշվածի պայմաններում հետաքրքիր կլիներ լսել նաև հեղինակի հիմնավորումները կապված այն հարցի շուրջ, թե ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթով առ այն, որ հանցանք չի համարվում այն արարքը, որը թեև ձևականորեն պարունակում է նույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված հատկանիշներ, սակայն իր նվազ վտանգավորության պատճառով ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանն էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել, արդյո՞ք հնարավոր չէ հաղթահարել վերը նկարագրված իրավիճակը, և եթե ոչ՝ ապա ինչով է պայմանավորված նման անհնարինությունը և քրեական օրենսգրքում լրացում կատարելու կարիքը:

3. Ատենախոսության 119-րդ էջում նշվել է, որ պրովոկացիայի արդյունքում, եթե այնուամենայնիվ, հանցագործություն չկատարվի, այդ դեպքում՝ տվյալ իրադրությունում պրովոկատորի արարքները կդիտարկվեն որպես հնարավոր ամենաթեթև հանցագործություն պրովոկացիայի փորձ:

Այս մոտեցումը վիճելի է, քանի որ առաջարկվող իրավանորմի բովանդակությունից, ինչպես նաև հեղինակի կողմից՝ 117-րդ էջում կատարված հստակեցումից հետևում է, որ առաջարկվող հանցակազմը ձևական է, հետևաբար այս պարագայում պրովոկատորի արարքի քրեաիրավական գնահատականը չպետք է շաղկապվի՝ պրովոկացիայի ենթարկված անձի կողմից՝ հանցագործության կատարվելու կամ չկատարվելու, ուստիև՝ պրովոկացիայի արդյունքում հետևանք առաջանալու հետ: Ուշագրավ է, որ այս տրամաբանությունը դրված է նաև աշխատանքում հենց հեղինակի կողմից, ինչը հստակ ամրագրվել է նաև պաշտպանության ներկայացվող 6-րդ դրույթում:

Այնուամենայնիվ, վերոնշյալ նկատառումներն ունեն մասնավոր բնույթ և չեն կարող ազդել հետազոտության բարձր գնահատականի վրա:

Այսպիսով, կատարված հետազոտությունն ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն, հեղինակի կողմից առաջ քաշված տեսական դրույթներն ու օրենսդրական առաջարկությունները կարող են օգտագործվել ինչպես հետագա գիտական

հետազոտություններ կատարելիս, այնպես էլ գործող քրեական օրենսդրությունը կատարելագործելիս: Բացի այդ, ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները կարող են օգտագործվել նաև ուսումնական պրոցեսում, ինչպես նաև նպաստել իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

Եզրակացություն:

Հայ-Ռուսական համալսարան առաջատար կազմակերպությունը հաշվի առնելով վերը շարադրվածը, գտնում է, որ Մելիք Արտաշեսի Մելիքյանի թեկնածուական ատենախոսությունը և սեղմագիրը համապատասխանում են ՀՀ Կառավարության՝ 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված (ըստ 21.10.2010թ. հ. 1436-Ն, 26.02.2015թ. հ. 214-Ն, 25.02.2016թ. հ.260-Ն, 21.02.2019թ. հ. 19-Ն, 02.11.2023թ. հ. 1901-Ն որոշումներով կատարված փոփոխությունների խմբագրությամբ) «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի և չափանիշների» 6-րդ, 7-րդ, 11-րդ, 13-րդ և 14-րդ կետերի պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ կատարված գիտական ուսումնասիրության արդիականության, իրավագիտության տվյալ բնագավառում նշանակության ու գիտագործնական կարևորության հիմքով:

Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի ինստիտուտի
քրեական իրավունքի և
քրեական դատավարության
իրավունքի ամբիոնի վարիչ
ի.գ.թ., դոցենտ՝ Ն.Յու. Զոհրաբյան

Ն.Յու. Զոհրաբյանի ստորագրությունը
հաստատում եմ՝
Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար, բ.գ.թ. Ռ.Ս. Կաժաբաբովա